

# ԱՌՅԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Նարինե Մադոյան

*Երևանի պետական համալսարան*

**Ք**սանմեկերորդ դարում ժամանակակից տեխնոլոգիաներն ու տեխնիկական միջոցները մեր կյանքի անբաժանելի մասն են դարձել, ուստի անհնար է պատկերացնել իրականությունը առանց համացանցի և համակարգիչների: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ է, որ կրթության և գիտության մեջ ի հայտ են եկել ուսուցման ու ուսումնասիրության նոր ձևեր, որոնք միանգամայն փոխել են դասավանդման և գիտահետազոտական աշխատանքի ավանդական մեթոդները: Գասախոսները կարող են համակարգիչների, առցանց կայքերի, բազմապիսի ծրագրերի միջոցով իրականացնել դասընթացը անգամ ամենահեռավոր տարածաշրջաններում, ինչը մի քանի տասնամյակ առաջ իրագործելի չէր: Առցանց ստուգումները՝ միջանկյալ կամ եզրափակիչ, դասախոսին թույլ են տալիս առավել արդյունավետ կազմակերպել դասընթացը:

**Բանալի բառեր.** առցանց ուսուցում, ավանդական ուսուցում, եզրափակիչ ստուգում, համաժամանակյա և տարաժամանակյա դասընթաց, առցանց քննարկում:

## Ներածություն

Առցանց ուսուցումը հնարավորություն է տալիս բարձր դասարանների աշակերտներին, նաև ուսանողներին մասնակցել առցանց դասընթացների անկախ նրանց գտնվելու վայրից: Առցանց դասընթացի կազմակերպման գործընթացում ուսուցչի դերը նույն կերպ կարևորվում է, քանի որ դասավանդման ավանդական մեթոդների շատ յուրահատկություններ բնորոշ են նաև առցանց դասավանդմանը: «Առցանց ուսուցում», կամ ինչպես հաճախ անվանում են «հեռակա ուսուցում» տերմինաբանական կապակցությունը ներառում է համակարգչի միջոցով դասավանդման մի շարք մեթոդներ: Այս միջավայրում ուսուցման գործընթացը երկու կարևոր առավելություն ունի. նախ ուսանողների առավել ակտիվ և ուշադիր մասնակցությունը և ապա՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մեջ հմտանալու նրանց հնարավորությունը: Սակայն հարկ է նշել, որ առցանց ուսուցման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նաև դասախոսի հմտության մակարդակով, քանի որ այս

դեպքում կարևորվում են նաև դասավանդման ավանդական և առցանց մեթոդները զուգակցելու՝ դասախոսի հմտությունները (Feenberg 1998):

### **Առցանց ուսուցման համաժամանակյա և տարաժամանակյա դասընթացների կազմակերպման առանձնահատկությունները**

Առցանց ուսուցումը իրականացվում է ուսուցման համաժամանակյա և տարաժամանակյա ձևերի զուգակցմամբ: Համաժամանակյա դասավանդման ընթացքում կարևորվում է գրուցակիցների՝ տվյալ դեպքում ուսանողի և դասախոսի, իրական ժամանակում գտնվելու հանգամանքը: Դասընթացն իրականանում է հետևյալ ձևերով.

- տեսաձայնահաղորդակցում,
- չատ,
- վիրտուալ իրականության մեջ ձեռք բարձրացնել,
- վիրտուալ գրատախտակ:

Տարաժամանակյա ուսուցումը ենթադրում է.

- էլեկտրոնային նամակներ,
- փոխկապակցված քննարկումներ,
- կցված փաստաթղթերի կիրառություն:

Հարկ է նշել, որ առցանց ուսուցումը արդյունավետ իրականացնելու կարևորագույն նախապայմանը ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքներով առաջնորդվելն է: Սա ակնհայտորեն նպաստում է, որպեսզի ուսանողները միմյանց օգնելով սովորեն «սովորել»: Մեկ այլ յուրահատկություն է սեփական հանձնարարությունների գնահատումը, որն, անշուշտ նվազեցնում է դասախոսի՝ կողմնակալ լինելու հավանականությունը: Այդուամենայնիվ՝ առցանց ուսանողակենտրոն ուսուցում իրականացնելու համար նախ և առաջ պահանջվում է ուսանողներին նախապատրաստել տվյալ ուսումնական գործընթացին: Բանն այն է, որ ուսանողները պետք է քաջ ծանոթ լինեն ուսուցման տվյալ ձևին, քանի որ հակառակ դեպքում կարող են չհարմարվել դրան՝ նման դասընթացները համարելով շփոթեցնող: Հաճախ նախնական փուլում ուսանողները առցանց ուսուցումը համարում են ավելի մատչելի քան ավանդականը, սակայն իրականում առցանց ուսուցման ինքնուրույն աշխատանքները ավելի ծավալուն են, և ուսանողները հաճախ ստիպված են ինքնուրույն կատարել աշխատանքի մեծ մասը՝ ներկայացնելով քննարկվող թեմայի վերաբերյալ մեկնաբանություններ: Առցանց ուսուցումը սկսելուց առաջ հարկ է ուսանողներին նախնական տեղեկություններ հաղորդել տվյալ ուսուցման յուրահատկությունների վերաբերյալ՝ առաջին հերթին նրանց տրամադրելով տարրական տեխնոլոգիական հմտություններին ծանոթացնող ուղեցույցներ, ամբողջական բացատրագրքեր և սովորեցնել նրանց, թե ինչպես հաղորդա-

գություն տեղադրել առցանց միջավայրում: Ուսանողը պետք է ծանոթ լինի նաև տարբեր առցանց հարթակների հետ, քանի որ դրանք կարող են իրարից նկատելիորեն տարբերվել: Ուսանողը պետք է տիրապետի նաև անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու, հանձնարարություններ տեղադրելու, դասընթացին վերաբերող գրականություն ձեռք բերելու, ինչպես նաև առցանց քննություն հանձնելու հմտություններին:

Առաջնահերթ կարևորությունների շարքում են նաև առցանց և ավանդական ուսուցման տարբերությունների իրազեկումը, դասընթացին հատկացվող ժամանակային սահմանափակումների և ինքնուրույն աշխատանքի անհրաժեշտության գիտակցումը: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ բոլոր լսարանային քննարկումները տվյալ դեպքում գրավոր են և պատշաճ ժամանակահատված են պահանջում մեկնաբանություններ գրելու համար: Սրան են առնչվում նաև ընթերցանության և գրավոր պրակտիկայի կարևորության խնդիրները: Էսպես կարևոր է նաև այն, որ ուսանողների՝ լսարանում հարց տալու անհնարիմությամբ պայմանավորված՝ ներկայացվող հանձնարարությունները պետք է հնարավորինս մատչելի լինեն:

Վերը շարադրվածը թույլ է տալիս նկատել, որ առցանց դասընթացը պահանջում է մասնագիտական մեծ հմտությամբ նախապես կազմված պլան, ուսուցողական նյութ և դրա արդյունավետ մատուցման մեթոդների կիրառություն, ընդ որում հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են տվյալ լսարանի հմտություններն ու պահանջումները և ուսանողների գիտելիքի մակարդակը:

Դասախոսի առաջնահերթ խնդիրներից է գիտելիքի ստուգման իրականացումը, որն անհրաժեշտ է ըստ արդունքների կողմնորոշվելու և առցանց դասընթացը համապատասխանաբար վարելու համար: Դասընթացի ստեղծումը կարող է ժամանակատար լինել, քանի որ, ինչպես վերև արդեն նշվել է, հարկ է հաշվի առնել լսարանի՝ տվյալ առարկայի իմացության մակարդակը, համակարգչային հմտությունների տիրապետման աստիճանը, ինչպես նաև մշակութային գործոնները: Անհրաժեշտ է դասընթացի ծրագրում նկատի առնել նաև ծրագրից շեղվելու հավանականությունը՝ նրանում ներառելով հավելյալ ժամանակ տեխնիկական հնարավոր խոչնդոտները հաղթահարելու համար:

Առցանց դասավանդման կարևորագույն գործոններից է դասընթացի հստակ կազմակերպումը՝ հաշվի առնելով ուսանողների՝ վիրտուալ տիրույթում աշխատելու հանգամանքը, որը բացառում է հանձնարարության հասկացման հետ կապված խնդիրները պարզաբանելու հնարավորությունը: Առցանց դասընթացում առկա չեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են կանոնավոր հաճախումը դասերի կամ գրավոր աշխատանքների հանձնարարումը, ուստի ուսանողների համար ծրագիրը պետք է լինի լիարժեք և ընկալելի:

Առցանց դասընթացի ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է այն բաժանել մասերի. հանձնարարությունները պետք է ներկայացնել էջերով՝ նշելով նյութի կարևոր կետերը, ինչպես նաև տեսությանը հակասող օրինակներն իրենց բացատրություններով: Գրասխոսը պետք է ծրագրի մեջ ընդգրկի, թե ինչքան ժամանակ է հարկավոր տվյալ թեման ամփոփելու համար. Այսպես՝

առաջին շաբաթ

Գոյական (թիվը)՝ A Practical English Grammar by A. J. Thomson A. V. Martinet, էջ 25-28:

Վարժություններ՝ Longman English Grammar Practice by L. G. Alexander, էջ 34-36:

երկրորդ շաբաթ

Անհաշվելի գոյականներ՝ A Practical English Grammar by A. J. Thomson A. V. Martinet, էջ 28-30:

Վարժություններ՝ Longman English Grammar Practice by L. G. Alexander էջ 30-32:

Ծրագիրը կազմելիս պահանջվում է նաև նկատի ունենալ հանձնարարությունների համամասնությունը: Քանի որ ուսանողները սովորում են իրենց անհատական ռիթմով, ուստի նրանց հարկավոր է հստակ իմանալ վերջնաժամկետները, նաև այն, թե որքան ժամանակում է անհրաժեշտ կատարել հանձնարարությունները: Հանձնարարությունների սյունակում դասախոսը պետք է ևս մեկ անգամ շեշտի դժվարամարս կետերը՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանձին էջերի վրա:

### **Միջանկյալ և եզրափակիչ ստուգումների կարևորությունը առցանց ուսուցման գործընթացում**

Հայտնի է, որ հաճախ ուսուցման արդյունավետության բարձրացման հիմնական խթանը ուսանողին համապատասխանաբար գնահատելն է: Առցանց դասավանդումը գնահատման մի քանի միջոց է ներառում. առցանց թեստավորումը, բլեքբորդ համակարգը, որը կիրառում է գնահատման ավոտմատացված միջոցներ: Գնահատականները ավտոմատ կերպով ավելացվում են բլեքբորդ գնահատման կենտրոն: Ինչ վերաբերում է թեստատեղծմանը, ապա գոյություն ունի մի քանի տարբերակ, ընդ որում՝ թեստ կազմողը կարող է կիրառել հարցերը առանձին տպելու մեթոդը: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս պատճենել թեստը և հարցերը տեղադրել բլեքբորդի համակարգում, որն էլ թույլ է տալիս աշխատել ցանցից դուրս: Այսինքն, ոչ առցանց աշխատելու դեպքում համակարգը թույլ է տալիս թեստ հանձնողին ստուգել ուղղաբությունը: Սակայն ակնհայտ անհրաժեշտություն է զգացվում ուսանողներին նախապես ծանոթացնելու բլեքբորդ համակարգի յուրահատկություններին և

սովորեցնելու թեստի առցանց լրացման ձևը՝ նրանց տրամադրելով նմուշ թեստ: Բլեքբորդի թեստային համակարգը հիմնականում կիրառելի է **Եզրափակիչ ստուգման** ժամանակ: Եզրափակիչ ստուգումը համաչափ ձև է, որն իրականացվում է յուրաքանչյուր մշակված դասընթացի վերջում: Եզրափակիչ ստուգումները գնահատվում են և ազդում վերջնական գնահատականի վրա: Եզրափակիչ ստուգումը իրականացվում է թեստերի, հարցախաղերի, խաչքառերի և համադրված նախագծերի կիրառմամբ: Խաչքառերի ներմուծումը առավել արդյունավետ է բառապաշարը ստուգելու և գնահատելու համատեքստում: Հոթ փթեյթոս ծրագիրը կարելի է կիրառել վերոնշյալ ստուգման բոլոր ձևերի դեպքում:

Հարկ է հաշվի առնել այն փաստը, որ ուսանողները կարող են օգտվել բառարաններից, կայքերից և այլ հասանելի միջոցներից, ինչն էլ կարող է ազդել թեստի վերջնական գնահատականի ձևավորման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել որ ուսանողների 60 տոկոսը թեստ գրելիս դիմում է խաբեության: Այդուամենայնիվ, առցանց դասընթացում խաբեության դեպքերը սկնհայտորեն նվազում են:

Ուսանողի առաջխաղացման ընթացքի ստուգումն ու միջանկյալ գնահատումը նույնպես կարելի է կատարել առցանց ուսուցման շրջանակում: Գնահատման տվյալ ձևը նպատակահարմար է շարունակական արձագանք ստանալու համար, որն ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: **Միջանկյալ ստուգումները** օգնում են ուսանողներին բացահայտելու իրենց սեփական ուժեղ և հատկապես թույլ կողմերը, որոնց շուրջ նրանք պետք է աշխատեն (Hargreaves 2008): Միջանկյալ գնահատումը ուսումնական գործընթացում բարելավում է կրթության որակը: Նշված ստուգումների միջոցով դասախոսը կարող է փոխել դասի ընթացքը՝ կիրառելով անհրաժեշտ մեթոդներ: Միջանկյալ գնահատումները թույլ են տալիս դասախոսին հմտանալ դասի պլանավորման և մատուցման մեջ՝ հաշվի առնելով ուսանողների մտավոր և հոգեկան վիճակները: Դասախոսը կարող է փոխել դասի ընթացքը՝ վերլուծելով միջանկյալ գնահատականների արդյունքները: Միջանկյալ գնահատումները կրկնվող բնույթ են կրում և արդյունավետ են այն առումով, որ թույլ են տալիս պարզելու գիտելիքների ինչպես մակարդակը, այնպես էլ որակը (Gikandi et al. 2011): Առցանց գնահատման սույն ձևը թույլ է տալիս դասախոսին հետևել ուսանողի առաջընթացին՝ նրան հանձնարարելով պահանջվող նյութեր որոնք կնպաստեն ուսուցման որակի բարձրացմանը: Միջանկյալ գնահատման համակարգի ներդրումը թույլ է տալիս դասախոսին և ուսանողին աշխատելու միասին, բայց միևնույն ժամանակ լիովին առանձին:

Ստուգումները իրականացնելով թեստերի, հարցախաղերի կամ խաչքառերի միջոցով, որոնցում ընդգրկվում են առօրյա իրավիճակներ, շեշտը սովորա-

բար դրվում է քերականական կառույցների վրա: Օրինակ՝ անգլերենի անցյալ կատարյալ ժամանակաձևը թեստում կարող է կիրառվել հետևյալ կերպ. ուսանողին տալով համապատասխան ժամանակակի մակբայը կամ տարեթիվ կարելի է նրան ծանոթացնել որևիցե նկարչի աշխատանքի հետ: Միջանկյալ ստուգումից հետո ուսանողները կարող են առցանց քննարկումներ կազմակերպել նոր նյութի շուրջ՝ ներկայացնելով նոր տեղեկատվություն տվյալ նկարչի մասին: Ինչպես գիտենք, անգլերենի անցյալ կատարյալ ժամանակաձևը կիրառում են նաև նկարագրություններում, ուստի ուսանողին ևս մեկ անգամ հնարավորություն է ընձեռվում ամրապնդելու տվյալ թեմային առընչվող իր գիտելիքները: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ միջանկյալ ստուգման ժամանակ ուսանողները ակտիվ մասնակիցներ են և կարող են ընտրել, թե որ ստուգման ձևն է ավելի նպատակահարմար: Որոշ լեզվաբանների կարծիքով «ընտրեք ճիշտ պատասխանը» հաճնարարությունը ավելի արդյունավետ ստուգման ձև է (Wilson et al. 2011):

### **Եզրակացություն**

Ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ առցանց ուսուցումն իրագործելի է համակարգչային հմտությունների կատարյալ տիրապետման պարագայում:

Կիրառելով միջանկյալ և եզրափակիչ գնահատման ձևերը դասախոսը կարող է արդյունավետ կերպով կազմակերպել և փոխել դասի ընթացքը՝ շեշտը դնելով գիտելիքահենք թեստերի ստեղծման վրա: Բազմաթիվ առցանց ծրագրերի առկայությունը դասախոսին հնարավորություն է ընձեռում ընտրելու ստուգման ճիշտ ձևը՝ ինչն էլ դարձնաքան դարձնում է առավել արդյունավետ և հետաքրքիր: Ուսանողները, մասնակցելով առցանց դասընթացներին և ստանալով անհրաժեշտ գիտելիքներ՝ կարող են շահավետ կերպով խմայել իրենց ժամանակը:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Bender, T. (2003) *Discussion based Online Teaching to Enhance student Learning*. Stylus Publishing, LLC.
2. Bloom, B.S. (1969) *Some Theoretical Issues Relating to Educational Evaluation*. // *Educational Evaluation: New Roles, New Means*. / The 63rd yearbook of the National Society for the Study of Education, part 2. Vol. 69. / Ed. by R.W. Tyler, pp. 26-50. Chicago, IL: University of Chicago Press.
3. Brady, A.M. (2005) *Assessment of Learning with Multiple-choice Questions*. // *Nurse Education in Practice* 5, pp. 238–242.

4. Feenberg, A. (1998) *The Written World: On the Theory and Practice of Computer Conferencing*. // *Mindweave: Communication, Computers, and Distance Education*. / Ed. by R. Mason and A. Kaye. Oxford: Pergamon Press.
5. Gikandi, J.W.; Morrow, D. & Davis, N.E. (2011) *Online Formative Assessment in Higher Education: A Review of Literature*. // *Computers & Education* 57, pp. 2333-2351.
6. Goldstein, J. & Behuniak, P. (2012) *Can Assessment Drive Instruction? Understanding the Impact of One State's Alternate Assessment*. // *Research & Practice for Persons with Severe Disabilities*, 37(3), pp. 199-209.
7. Hargreaves, E. (2008) *Assessment*. // *The Routledge International Encyclopaedia of Education* / Ed. by G. McCulloch, & D. Crook. New York: Routledge, pp. 37–38.
8. Jordan, S. (2009) *Assessment for Learning: Pushing the Boundaries of Computer-based Assessment*. // *Practitioner Research in Higher Education*, 3, pp. 11–19.
9. *Teaching at an Internet Distance: the Pedagogy of Online Teaching and Learning*. / The Report of a 1998-1999 University of Illinois Faculty Seminar. Available at <[http://www.vpaa.uillinois.edu/tid/report/tid\\_report.html](http://www.vpaa.uillinois.edu/tid/report/tid_report.html)> [Accessed December 2015]
10. Wilson, K.; Boyd, C.; Chen, L. & Jamal, S. (2011) Improving Student Performance in a First-Year Geography Course: Examining the Importance of Computer-Assisted Formative Assessment. // *Computers & Education*, 57(2), pp. 1493-1500.

## ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Alexander, L.G. (1990) *English Grammar Practice*. UK: Longman.
2. Thomson, A.J.; Martinet, A.V. (1991) *Practical English Grammar*. Oxford: OUP.

### **On the Peculiarities of Online Teaching and Assessment**

In the 21<sup>st</sup> century innovative technologies have become an indivisible part of our life, hence it is impossible to imagine our reality without computers and networks. Thanks to these innovative technologies new teaching methods have come into practice in education and science. Instructors and lecturers can teach a course via computers, websites and various software in the most distant areas, a fact, quite unrealizable some decades ago. Online formative and summative assessments give the instructors the opportunities to organize the course more effectively.

### **Об особенностях онлайн-обучения и оценивания**

В XXI веке новейшие технологии стали неотъемлемой частью нашей жизни, поэтому трудно представить себе современную действительность без интернета и компьютеров. Благодаря новейшим технологиям в образовании появились новые виды обучения, которые полностью изменили методы традиционного преподавания. С помощью компьютеров, онлайн-сайтов, разнообразных программ преподаватель может донести свой курс даже в самые дальние регионы, в то время как несколько десятилетий назад это было совершенно невозможно. Онлайн-проверки, промежуточные или обобщающие, дают преподавателю возможность продуктивно организовать процесс обучения.